ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները....»:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման գործընթացի շրջանակում պատվիրատուի և մասնակցի հակաօրինական արարքներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Այսպիսով, Դատարանը՝ հիմք ընդունելով վերոգրյալ եզրահանգումները, գտնում է, որ պատասխանողի հայտարարված նախաորակավորման ընթացակարգի հայտարարությունն իրավաչափ չէ, ինչը հանգեցնում է այն ոչ իրավաչափ ճանաչելու հետևանքին:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջը հիմնավոր է և բավարարման ենթակա:

<u>Դատական ծախսերի բաշխման հարցի լուծում.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ հայցադիմումի համար օրենքով սահմանված չափով պետական տուրքը հայցվորի կողմից նախապես վճարվել է, իսկ հայցը բավարարվում է, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 60,000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

«Փրոմոուշն» ՍՊ ընկերության հայցը բավարարել:

Ոչ իրավաչափ ճանաչել «Լևոն Հայրապետյանի անվան սամբոյի և ձյուդոյի օլիմպիական մանկապատանեական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ «ԼՀՍՁՕՄՄ-ԲՄԽԾՁԲ-23/1 ընթացակարգի ծածկագրով 01.09.2023 թվականին հրապարակված նախաորակավորման ընթացակարգի մասին հայտարարության պահանջները:

«Լևոն Հայրապետյանի անվան սամբոյի և ձյուդոյի օլիմպիական մանկապատանեական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից հօգուտ «Փրոմոուշն» ՍՊ ընկերության բռնգանձել 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և այն կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ